# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի «Օրենսդրության
կարգավորման ազգային կենտրոն
ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկի տնօրեն
պարոն Ա. Եղիազարյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 29-ի
37/37.2/18323-13 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Եղիազարյան**

Կից ներկայացնում ենք ««Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 484-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N 386-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

**Հարգանքով՝** **Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Մ. Սահակյան, հեռ. 380 227**

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ**

««Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** ** Լ. ԽՏՐՅԱՆ**